արտահանուած Ա. տեսակի կերոսինի քանակութիւնը եղել է 17,199,105 պ. իսկ Բ. տեսակից 8,260,022 պ. ընդամենը 25,459,127 պ։

Ա. տեսակից իւրաքանչիւր պուդին 40 կոպեկ ակցիզային տուրք հաշուած լինում է 6,879,642 ռուբլի։ Իսկ Բ. տեսակինը 30 կոպէկ.—2,478,006 ռ. 60 կոպ. ընդ ամենը 91 թուի ընթացքում արքունի գանձարանն է մտած իբրեւ ակցիզային տուրք 9,357,648 ռուբլի և 60 կոպեկ։ Ներկայ տարուայ մարտ ամսից Բարձրագոյն հրամանով բարձրացած է Բ. տեսակի 30 կոպեկանոց տուրքը և հաւասարեցրած է Ա. տեսակի հետ։

«Երեք տարուայ ընթացքում Բագուի նաւթային արդիւնաբերութիւնները արտահանուած են արտասահմանեան պետութիւնների հետեւեալ երկիրները.

1882 թ.	պուդ.	1890 թ.	1891 թ.
Մեծ Բրիտանիա	7,088,192	8,737,825	6,611,076
Թուրքիա	7,507,871	7,684,956	12,484,278
Աւստրիա Ունգարիա	6,621,688	6,608.017	10,088,796
Գերմանիա . . .	1,747,596	1,383,443	1,119, 20
Բելգիա	2,567,285	2,614,422	4,042,317
Իտալիա	2,130,861	2,731,407	2,190,426
Հոլանտիա . . .	405,294	460,530	231,620
Բալկ—թերակղզին	552,674	709,218	687,226
Ֆրանսիա . . .	1,263,167	1,430,922	1,061,385
Ցունաստան . . .	47,436	22,030	110,178
Սպանիա	519,450	129,710	1,000
Եգիպտոս և Հնդկաս.	6,580.470	9,914,105	8,652,826
Զիբրալտար և Մալտա կղզին	—	—	618,022
Ընդ ամենը	37,031,912	42,426,485	47,890,320

«Իսկ ինչ վերաբերում է 1892 թուի արդիւնաբերութիւններին, կամ արտահանութիւններին, այդ մասին կխօսենք ուրիշ անգամ, բայց առ այժմ կարող ենք ասել, որ եթէ նաւթային գործերի ծանր դրութիւնը շարունակուի այսպիսի ճգնաժամի մէջ մընալ, մեծ արգելք կը հանդիսանայ արտահանութիւնների աւելանալուն։ Բագուից Բաթում նաւթանցք խողովակ շինելու հարցը շատերի միակ սփոփիչ յոյսն է, որ կարող է իրականացնել նրանց բաղձանքները, բայց դժբաղդաբար այդ բոլորը կմնան լոկ յոյսեր։